

Ք Ր Ո Ն Ք Կ Ո Ն



ԲՈՒՆ «ՄԱՆԱԶԿԵՐՏ» ԱՒԱՆԸ



Մինչեւ հիմայ մէկ Մանազկերտ ճանչցուած էր հնախոյզներէն, որ է վանայ ծովուն հիւսիսային արեւմտեան կողմեր ինկած Մանազկերտ կամ Մանծկերտ աւանն, ուր գերման հնախոյզ Տր. Պէլք խուզարկումներ կատարելով բեւեռագիր յիշատակարաններ գտաւ Իսպուխնիսի որդւոյն Մեհուառայ գործոց մասին: Իսկ ես ուրիշ Մանազկերտ կամ Մանծկերտ անունով տեղ մ'ալ գտած եմ վանայ ծովուն հարաւային սահմանին վերայ, Ռշտունեաց կամ Գաւաշ գաւառին մէջ եղած «Նոր գիւղ» անուն գեղին մօտերը: Այս գեղը շինուած է անհետացած քաղաքի մը աւերակներուն տեղը, որուն շուրջ իբր մէկ ժամու տարածութեամբ հին պարիսպներու եւ ուրիշ շէնքերու մնացորդներ կը նշմարուին, ինչպէս նաեւ հին գերեզմաննոց մը որ տեղացիները ձինուըզի (ձինու ա՞ղն, Դիւցա՞ղն) գերեզման կանուանեն: Գեղացւոց այժմեան վարած արտերու հետաքրքրական անուններն անգամ կը ցուցնեն թէ այդ ընդարձակ դաշտին մէջ անհետացած սերունդի մը շէն քաղաքը կար կառուցուած երբեմն: Արդէն մէկ երկու կտոր բեւեռագիրներ ալ դուրս եկած են այն տեղերէն, որոնք այժմ Աղթամարայ թանգարանին մէջ կը կենան: Հատ մըն ալ նոյն գեղի եկեղեցւոյ մկրտութեան աւազանին մօտ կը գտնուի պատին մէջ հաստատուած, որ՝ ըստ Տր. Պէլքի՝ Իսպուխնիսի յիշատակարանը կը կրէ: Ահա այս գեղին մօտն է այն տեղը որ՝ իբր աւերակներու հազու նշմարելի հետք մը՝ «Մանծկերտ» կը կոչուի տեղացիներէն, իբր Մանազկերտի ազաւազեալն, որ անշուշտ Մենուասի անունով կոչուած է: Արդէն ասկէ շատ հեռու չէ այն տեղը որ՝ ըստ հին աշխարհագրութեան՝ «Մանակերտ» կը կոչուի, իբրեւ Մանածիհր Ռշտունիի երկիր:

Գ. Լ. ՄԻԼՎԱՆ